Azg Ազգ

Դեկտեմբեր 10 Ուրբաթ 1993

ՈՒՆԿՈՒՄԻՐ ԱԶԱՏԱՄԱՐՏ ՕՐԱԹԵՐԹ

Դ տարի, թիվ 237 (488)

գինը 25 ռ.

դասալ 69149

Երևան 375010

Գրիգորի 47

հեռ. 58-841, ֆաքս 562941

տելեքս 243266 CPIRI SU

ՀՀ-Ազգ

ԱՐԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Պետք է վերականգնել չորս երկրների միասնական էներգահամակարգը»

Վրաստանի ներկայիս էներգետիկ ճգնաժամից դուրս գալու միակ ուղին 4 պետությունների՝ Ռուսաստանի, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի էներգամատակարարման երբեմնի միասնական համակարգի վերականգնումն է, գտնում է Վրաստանի պետության ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեն: Դեկտեմբերի 9-ին նա այն կարծիքը հայտնեց, որ դա օրեցօր է անել անհն գնալ, անկախ վերոնշյալ երկրների փոխհարաբերություններից եւ ազգամիջյան հակամարտություններից: Շեւարդնաձեն նշեց, որ այդ հարցի շուրջ առաջին միասնական խորհրդակցություններն են անցկացվում, բնականաբար ավելացնելով, «բայց հիմա հարկավոր է մարել հրդեհները: Այդ ոչն դարաբաղեա չկա»:

Սնարտ

ԱՐԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Բաքվի դիրքը հղի է վտանգներով ադրբեջանական ժողովրդի համար»

Մերժելով դարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ-ի խաղաղ ծրագիրը, Ադրբեջանն ըստ էության ա ներկայորեն հասկացրեց, որ շարունակում է շեշտը դնել խնդրի զուգահեռ լուծման վրա: դեկտեմբերի 9-ին հայտարարեց ԼՂՀ ԳԽ նախագահի դաշնային կարգավիճակ Բաբուրյանը: Նրա խոսքերով, այդ են վկայում բենզին այնքան փաստեր, ինչպիսիք են Բաքվի իշխանությունների կողմից տարբեր երկրների զինվորական մասնագետների ներգրավումը, դիմակայության գծի երկայնքով զուգահեռ հարձակողական տեխնիկայի եւ կենդանի ուժի կենտրոնացումը, հանրաքվեության զանգվածային լրատվության միջոցներում, հատկապես Բաքվի հեռուստատեսությամբ հսկահայկական հիստերիայի բորբոքումը:

Մինչդեռ, չնայած դրաբարական Բաքվի՝ նման ոչ կառուցողական դիրքորոշմանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կողմնակից է մնում հակամարտության խաղաղ կարգավորմանը, շեշտեց Կարեն Բաբուրյանը:

«Լեռնային Ղարաբաղը մտադիր չէ ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկներում գնալ զիջումների», իր հերթին երեկ հայտարարեց ԼՂՀ խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լեւոն Մելիք-Շահնազարյանը: Նրա կարծիքով, առկա փխրուն հաղթությունը դահիճանելու համար դրական բաներ ավելի կառուցողական մոտեցում դեպի է ցուցաբերի այս հարցերին: Մեկնաբանելով Ադրբեջանի ԱԳ նախարար Հասան Հասանովի վերջին ասածները հայտարարությունները, Մելիք-Շահնազարյանը նշեց, որ դրանք «հղի են մեծ արյամբ նախեւասոք ադրբեջանական ժողովրդի համար»:

Սնարտ

Կրակակետերը լռեցվեցին

Երեկ եւ նախորդ գիշեր իրադրությունը Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում շարունակվում էր մնալ անկայուն: Ստեփանակերտի մեր թղթակից, Վահրամ Աղաջանյանը հաղորդում է, թե ԼՂՀ դաշտպանության բանակի շտաբի տվյալներով, դեկտեմբերի լույս 9-ի գիշերը դեռեւս ադրբեջանական ուժերի վերահսկողության տակ գտնվող Լենինի Նավանի մերձակայքից հրետակոծվել են Ստեփանակերտի շրջանի հայկական դաշտանական դիրքերը: Նախնական տվյալներով, հայկական կողմից տուժածներ չկան: Դաշտանական կրակով դարաբաղյան ուժերին հաջողվել է ոչնչացնել թշնամու կրակակետը:

Ըստ նույն աղբյուրների, Բեյլագանի շրջանի ռազմական հենակետերից խոշոր տրամաչափի զենքերից գնդակոծվել են նաեւ Ֆիզուլու շրջանի հայկական դիրքերը: Մանրամասնությունները ճշտվում են: Ռազմաճակատի մյուս հատվածներում երեկ եւ նախորդ գիշեր արձանագրվել են միայն կարճաժամ դիրքային փոխհրաձգություններ: ԼՂՀ ռազմական հետախուզության տվյալներով, Ղարաբաղի արեւելյան ռազմաճակատի երկայնքով շարունակվում են ադրբեջանական բանակի ռազմական տեխնիկայի եւ կենդանի ուժի զգալի կուտակումները: Ինչ վերաբերում է Հայաստանի սահմանամերձ շրջաններին, սակայն այստեղ անցած երկու օրերի ընթացքում ռազմական որեւէ միջադեպ չի արձանագրվել:

«Ազգ»

ԱՐԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԴԵՄ ՔՐԴԱԿԱՆ ԱՐԱԲԵԿՈՒԹՅԱՆ

Թուրքիայի հեռուստատեսության հաղորդման հետեւանքով, դեկտեմբերի 7-ին Շվեյցարիայի դաշնային խորհուրդը որոշում է ընդունել ադրբեջանական Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) բաժանմունքների նկատմամբ խիստ միջոցներ ձեռնարկելու մասին:

Որոշմանը համադրաստասխան դաշնային ծառայությունները ցուցում է տվել հատուկ վերահսկողության տակ առնել ՔԲԿ-ի բաժանմունքները եւ դրանց հետ կապված կազմակերպությունները, խստացնել մուտքերի, ինչպես նաեւ զենքի ձեռքբերման վերահսկումն այն անձանց նկատմամբ, ում կասկածում են ահաբեկչության մեջ: Դաշնային խորհրդի որոշման մեջ նշվում է, որ այն կոչված է պաշտպանելու երկրի բոլոր հաղորդիները, այդ թվում թուրքերի կյանքն ու շահերը, սակայն ուղղված չէ Շվեյցարիայում բնակվող քրդերի դեմ:

Մեկնաբանելով այդ որոշումը, Շվեյցարիայի արտաքին գործերի նախարար Ռ. Քոլերը հայտարարեց, որ արդարությունը չի բացառվում ՔԲԿ-ի գործունեության լիակատար արգելման հնարավորությունը, ինչպես դա արդեն տեղի է ունեցել Գերմանիայում եւ Գերմանիայում:

Երեքշաբաթ օր շարք երկրներում ՔԲԿ-ի գործունեության արգելման կապակցությամբ Թուրքիայի նախագահ Դ. Մեմիրելը ԱՄՆ կատարում դեկտեմբերի 7-ին հայտարարեց, որ իր կառավարությունը կդիմեն Թուրքիայի հարավ-արեւելյան սահմանակից երկրների նույնանման վճիռը: Նա ՔԲԿ-ի գրասենյակներին մեկ անգամ ես կոչ արեց հանձնվել իշխանություններին՝ օգտվելով Թուրքիայի ազգային մեծ ժողովի ընդունած հատուկ օրենքի և բաշխիչներից:

Թուրական «Սաբահ» եւ «Միլլիեթ» թերթերը դեկտեմբերի 8-ին հաղորդեցին, որ Սիրիան եւ Իրանը որեւէ դեպքում չեն բացառվում ՔԲԿ-ի գործունեության լիակատար արգելման հնարավորությունը, ինչպես դա արդեն տեղի է ունեցել Դ

Խորհուրդ

Անշեղորեն շեղվենք գրաֆիկից

Վերջին ժամանակներս հանգամանքների բերումով հայ ժողովուրդը բազմիցս ժամանակացույցների՝ գրաֆիկների հետ է առնչվում: Եւ եթե դարաբաղյան հակամարտության կարգավորման ժամանակացույցները այնքան էլ շատ չեն, եւ դրանց, այնուամենայնիվ, այսուայնկողմից ոչատասխաններ լինում են, արդա կան ժամանակացույցներ, որոնց միայն կազմելու վերաբերյալ կարելի է ոչատասխան ստանալ, իսկ մնացած խնդիրները դարձել գրեթե անհույս է, ավելի ճիշտ, անօգուտ: Ըստ երեւույթին, շատերը գլխի ընկան, որ խոսք հովհարային անջատումների ժամանակացույցի՝ գրաֆիկի մասին է: Յուրաքանչյուր ժամանակահատվածի, ասենք, ամսվա համար բարեխղճությամբ ու ոչատասխանատվությամբ գրաֆիկ է կազմվում, համապատասխան որի օրինակ երեւան քաղաքի փողոցներն ու թաղամասերը, որ ներառված են «էլեկտրական» 6 խմբերի մեջ, էլեկտրական հոսանք են ստանալու: Կազմելը կազմել, բայց որ ոչատասխանատվությունն այս գործում գրաֆիկ կազմելուց այն կողմ չի անցնում, շատերն են հասկացել եւ տեսածով, եւ լսածով: Վերցնենք հենց թեկուզ 1993 թ. դեկտեմբեր ամսվա հովհարային անջատումների գրաֆիկը, որը դժբախտություն ունեցավ տպագրելու մեր թերթի երեկվա համարում: Դժբախտություն այն առումով, որ դեռ հաջորդ օրը նոր սկսված խմբագրությանը հետապնդագանգեր էին լինում մեր տպած գրաֆիկի ճշգրտության չլինելու մասին: Մեկը 2 ժամ է լույս ունեցել, մեկի լույսն ընդհանրապես չի անջատվել, մեկին լույս են տվել ոչ ըստ իր գրաֆիկի մյուսն ամբողջ գիշեր լույս է ունեցել: Ի դեպ, դատելով հովհարային անջատումների գրաֆիկից, երեւանում գիշերը ժամը 2-ից մինչեւ առավոտյան ժամը 6-ը լույս չպետք է լինի, այսինքն՝ էլեկտրական հոսանք: Բայց փաստ է, որ այդպես միայն ըստ գրաֆիկի է եւ ոչ իրականում:

Ըստ երեւույթին, հովհարային անջատումների գրաֆիկ կազմողներն իրենք էլ վստահ չեն եղել իրենց գրաֆիկը պահպանելու վրա, եւ այդ պատճառով են գրաֆիկի վերջում իրենք իրենց եւ իրենց «էլեկտրամատույց» եւ «լուսապահիսն» կոչեցածներին «սրախոսկա» արել բոլոր հնարավոր հուզումներից ու բողոքներից. «Առանձին թաղամասերում կարող են լինել գրաֆիկից դուրս միացումներ, կապված հաղորդակցացնում կատարվող վերանորոգման աշխատանքների հետ»: Եւ որ ամենակարեւորն է, «միացումների ժամանակ հնարավոր է ոչյուսմինուս 10 տեղումներ կապված համակարգի ռեժիմի հետ»: Դե արի ու այսպես «դյուրմբռնելի» բացատրություններից հետո դժգոհիր, թե ինչու ինչ, գրաֆիկից շեղվելով, հուսալի չեն տվել:

Հասկանալի է, որ էլեկտրացանցը վերանորոգվում է, ու դրա հետեւանքով գրաֆիկից շեղումներ են լինում ու լինելու են, բայց եթե վերանորոգում չլիներ էլ, մեկ է առանց շեղում հնարավոր չէ լրջա գնալ, որովհետեւ դրա մասամբ կարարման ոչատասխանատուներն են շեղված, ու էլեկտրացանցի հետ նրանց էլ է վերանորոգել ոչեսք: Այլապես անօգուտ է խորհրդակցության ծիսս անցկացնել, որոշում ընդունել եւ առավել եւս, հովհարային անջատումների գրաֆիկ կազմել: Հատաս անօգուտ է: Թե՞ էլեկտրացանցը ճշտակա՞ն վերանորոգման մեջ է, այդ պատճառով են հովհարային անջատումներն անշեղորեն շեղվում:

Գ. Ն.

«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

© Apple® Macintosh®
հանձնարարված ծառայություն
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Զգուշաւոր

ՈՒՐ ԵՆ ՏԱՆՈՒՄ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ ԵՎ ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Դեկտեմբերի 8-ին Գխում տնտեսական բլոկի չորս հանձնաժողովների եւ կառավարության մասնակցությամբ կայացած խորհրդակցության ժամանակ տարօրինակ կերպով նոր միայն նշվել է, որ դրամի կայունացման համար անհրաժեշտ ադրանային պաշարներ չունենք: Ինչպե՞ս հասկանալ: Ուրեմն իրո՞ղ ճիշտ էր այն մտավախությունը, որ սահմանված հայկական դրամի մենկարկային փոխարժեքը զուրկ էր հիմից եւ «թոզ էր փչում միամիտների աչքերին», իսկ տարադրամի ազատ վաճառքը ոչ այլ ինչ էր, քան միջոցների փոշիացման ցուցադրանք...

Դեկտեմբերի 8-ին Գխում տնտեսական բլոկի չորս հանձնաժողովների եւ կառավարության մասնակցությամբ կայացած խորհրդակցության ժամանակ տարօրինակ կերպով նոր միայն նշվել է, որ դրամի կայունացման համար անհրաժեշտ ադրանային պաշարներ չունենք: Ինչպե՞ս հասկանալ: Ուրեմն իրո՞ղ ճիշտ էր այն մտավախությունը, որ սահմանված հայկական դրամի մենկարկային փոխարժեքը զուրկ էր հիմից եւ «թոզ էր փչում միամիտների աչքերին», իսկ տարադրամի ազատ վաճառքը ոչ այլ ինչ էր, քան միջոցների փոշիացման ցուցադրանք...

Ինչ գնե՞ր: Չէ՞ որ բարձր ամբիոններից հավաստիացումներ էին կատարվում, որ թեեւ սխալված ենք բայց ամում, սակայն գները կվերադառնան նոյեմբերի սկզբների մակարդակին: Այսօր, երբ իրականությունը մախաք դառած ծակում է, ընդգծվում է, որ ունենք «տրակական նոր շուկա, ուր գների աճին զուգահեռ գրանցվում է ադրանքների ֆիզիկական ծավալների կրճատում»: Իսկ որ այս գեղեցիկ ձեւակերպման հետեւում կա զանգվածների հուսախաբություն, մոլորյալ վիճակ, այս մասին ընդամենը «կենսամակարդակի անկում 2-2.5 անգամ»:

Կատարված փաստի առջեւ, երբ բնականոն հարց կարող է առաջանալ ոչատասխանատվության վերաբերյալ, ըստ Լկոնոմիկայի նախարարի ոնդման, հանկարծ զարգվում է, որ կառավարությունը երկրի նախագահին հավաստիացումներ չի տվել, որը հիմք ընդունելով, նախագահը դրամափոխանակության նախարեին ունեցած իր երդյրի մեջ հայտարարել է գների հեռընթաց շարժի մասին: Ինչպե՞ս հասկանալ: Նախագահի նման հայտարարությունը նո՞ւյնպես սխալված արված քայլ էր:

Պարզվում է նաեւ, որ դրամափոխանակությունն իրականացնելիս եւ դրամի կայունացմանն ուղղված միջոցառումներ մշակելիս անհամաձայնություններ են եղել կառավարության եւ դրամափոխանակության կարգավորման ոլեսական հանձնաժողովի, այսինքն՝ «եռյակի» միջեւ, կազմված փոխանակման կուրսի եւ որոնս ադրանքային ժամկետ տալու հարցերում: Սակայն մի՞թե մամանակ չկար այդ տարաձայնությունները հարթելու, ընդհանուր հայտարարի գալու համար: Իսկ եթե չկար, ո՞վ է մեղավոր:

Եւ եթե կառավարության ընդունած մի շարք որոշումներն ու միջոցառումներն առայժմ ցանկալի արդյունք չեն տալիս, դրամը շարունակում է «անկում» ապրել, փոխարենը գների հետ լարվածությունն է աճում շուկայում: Մեղավորը շուկա՞ն է: Լավ, ու՞ր են նրանք, անուն առ անուն, ովքեր ոչատասխանատվություն ոչիչ կրեն որոշման չգործելու համար: Չմոռանանք, որ այդպես էլ հայտնի չդարձավ, թե ո՞վ միջոցով էր դրամափոխանակության մասին ոլեսական գաղտնի լրտեսությունը «սարդել» Մոսկվա: Արժեզրկում նախատեսվում էր, սակայն դրա տեմպի մասին «ճշգրիտ հաշվարկներ չկան կատարվել», ուրեմն էլ ի՞նչ կանխատեսման ու հաշվարկների մասին է խոսքն առհասարակ, մի՞թե նույն միջոցառումը (որոշումը) նույն հաջողությամբ կարող է կիրառվել լինել, ասենք, 10 տոկոսի եւ 100-ի համար: Իհարկե վայրկյանային բառան ոչիչ աշխատանս, իհարկե ազգային դրամի կոնվերսացիայի մեխանիզմներ ոչիչ մշակվեն, բանկային գործառնությունները կատարելագործվեն եւ սարգանան ու կրկին... սխալված: Եւ այսեղ էլ դեկտեմբերի վերջերին ակնկալվող կուրսի կայունացման առնչությամբ, որին սպասում է ՀՀ ֆինանսների նախարարը: Որտե՞ղ են հիմքերը: Թե՞ նման «սպասումը» դարձյալ հանգամանքներով եւ բարի ցանկություններով բնորոշված «սխալված քայլ է»: Լավ, մի՞թե ոչ ոք իրեն հարց չի տալիս, թե դեղի ու՞ր են տանում այս «սխալված քայլերը»:

Ս. Ս.

Վիեննա

Հայաստանի օր Ավստրիայում

Դեկտեմբերի 8-ին Վիեննայում տեղի ունեցավ Ավստրիայում ՀՀ դեսպանության բացման հանդիսությունը, որին մասնակցում էր ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանը: Ներկա էին Ավստրիայի արտգործնախարարության ներկայացուցիչներ, ոչատասխանատու անձինք, հասարակական գործիչներ, հայ համայնքի ներկայացուցիչներ: Եռագույնն օծվելուց հետո նախարար Փափազյանն այն հանձնեց Ավստրիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Նավասարդյանին, որը Հայաստանի օրհներգի հնչյունների ներքո ամրացրեց դրոշաձողին:

Դեկտեմբերի 8-ին Վիեննայի միջազգային կենտրոնում ՀՀ արտգործնախարարը հանդիպում ունեցավ ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր տնօրեն Հանս Բլիկսի հետ: Քննարկվեցին Հայաստանի ատոմակայանի վերաբացման հարցերը եւ գործակալության հետ համագործակցության հնարավորությունները: Հանս Բլիկսը ոչատմեց նախարարին այդ ուղղությամբ գործակալության կատարած աշխատանքների եւ ծրագրերի մասին, ծանոթացրեց վերջին մի քանի ամսում իր կազմակերպության կողմից Հայաստան ուղարկված 3 մասնագիտական խմբերի հաշվետվություններին: Նա հավաստիացրեց, որ գործակալությունը կանի հնարավորը, որ հայկական կողմը հաջողությամբ լուծի ԱԷԿի շահագործման հետ կապված անվտանգության եւ տեխնիկական հարցերը:

Նախարար Փափազյանը շոշափեց Եվրաբանկի կողմից վերաբացման ֆինանսավորման հնարավորությունները: Բլիկսը խոստացավ ուսումնասիրել առաջարկը:

Դեկտեմբերի 8-ի երեկոյան Վահան Փափազյանը հանդիպեց ավստրահայ համայնքի հետ, ոչատմեց Հայաստանի ներքաղաքական իրավիճակի, միջազգային քաղաքականության եւ շրջանում ստեղծված իրավիճակի մասին, ոչատասխանեց ներկաների հարցերին:

Փարիզ

Պատահար երկաթուղում

Թումանյան-Վանաձոր հատվածում դեկտեմբերի 8-ին հացահատիկ տեղափոխող 20 վագոնից կազմված շարժակազմից 2 վագոն դուրս է եկել գծից՝ ընկնելով ավտոխճուղու վրա: Շտապարկվել են բոլոր միջոցները ոչատահարի հետեւանքները վերացնելու եւ բռնված հացահատիկն ավտոմեքենաներով Վանաձորի ոչահեստներ տեղափոխելու համար: Նպաստավոր տվյալներով, ոչատահարի ոչատճառը երկաթգծի այդ հատվածի անբարեկարգ վիճակն է:

Դեկտեմբերի 7-ին ՌԱԿ հանրապետական վարչության աշխատակազմի Ռուբեն Սիրգսյանը եւ վարչության անդամներ Սուքիաս Թորոսյանն այցելեցին Գյումրի եւ Սոչիսակ: ՌԱԿ ներկայացուցիչները Հանրապետական վարչության անունից ծաղիկներ դրեցին 1988 թ. Գյումրիի եւ Սոչիսակի զոհերի հուշարձաններին:

Նոր Սկզբամբ

Հիմա մենք սերո՞ցքն ենք, թե՞ թերմացքը

Արտագաղթի էպիկենտրոն դարձած Հայաստանի միակ լուսամուտ օդակայանն է: Վրաստանով անցնող երկաթուղին եւ բազում ավտոճանապարհները եւս կարող են երկրաչափական բոլոր օրենքների կարգով դուրս տանել երկրից:

Ըստ ոլեսական վիճակագրական կոմիտեի տվյալների, 93 թ. հունվարի 1-ին հանրապետությունում կար 3 մլն 722 հազ. 300 բնակչություն: Թե որքանն է այժմ մնացել, գայսօր մասնագետները չեն կարողանում ճշգրտորեն դարձել, որովհետեւ մարդիկ առանց գրանցումից դուրս գալու ծնկնում եւ այլեւս չեն վերադառնում: Օրերս ոլեսվիճկոմն իր նախաձեռնությամբ օդակայանի հետ այս առիթով համագործակցելու փորձ արեց, բայց ինչպես վկայում է ժողովրդագրության եւ աշխատանքի բաժնի ոլեսի Վահան Բաշխեցյանը, մասնագետներն օդակայանով մեկնողների գրանցումները հաշվարկելու հետ եւս մեծ հույսեր չեն կապում, քանի որ սահմանային ամբողջական ոլասկերը տարուց շատ է հեռու: Նախ, մարդիկ հեռանում են ոչ միայն «օդով», երկրորդ, օդակայանն անզոր է գրանցել, թե մեկնածներից ո՞ւմ աչքերն են անվերադարձի, ո՞ւմը վերադարձողի:

Մասնագետների մի մասն էլ ոլնդում է, թե հեռանում են հարուստներն ու օժտվածները, ասել է, թե մոտ 3 միլիոնի չհասնող մնացորդներս՝ աղքատներս ու չօժտվածներս ենք այսօրվա Հայաստանը:

Մի ոլարզ հաշվարկ անենք, ըստ նույն ծառայության տվյալների, 1987-ին բնական աճը հանրապետությունում 17.2 էր, 88-ին 11.3, 89-ին 15.6, 90-ին 16.3, 91-ին 15.1, 92-ին 12.2: 1987-ին Հայաստանում ծնվել է 78492 երեխա, 88-ին 74707, 89-ին 75250, 90-ին 79882, 91-ին 77825, 92-ին 70581: 92-ն ենկումային տարի է հանրապետության կենսական ցուցանիշներում, չնայած 93-ի տվյալները չեն տրամադրվել, բայց կարծում եմ, եզրակացություններ առանց հաշվարկների էլ կարելի անել... Ի դեպ, 1992-ին անհամեմատ նվազել է նաեւ ամուսնությունների թիվը եւ, որ անոլասելի է, նաեւ ամուսնալուծությունների (դարձյալ անհամեմատ) բերես, ամուսնացողներն ու ամուսնալուծվողներն առավել կարեւոր հոգսեր ու գլխացավանք ունեն՝ իրենց ընտանեկան կարգավիճակի մասին զգաստին ու դատարաններին իրազեկ չդարձնելու համար:

Հետազոտողների համար եւս մի բնչուկ առանց այդ էլ խճճված երկրում. փորձիր ոլարզել, թե ով է մեկնել ու հետ չի գալու, ով է հիվանդացել, բայց բժշկի չի դիմել, եւ ի վերջո, սերո՞ւցքն է այսոլես լիդաղաստ փախչում, թե՞ թերմացքը: Այս մեկը գոնե, ոլարզելը, որքան էլ անհնար, բայց հետազոտողների մեծագույն ոլարտքն է:

ՌՈՒԶԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բարու

Քրիստոֆերը կժամանի՞ Բաքու

Դեկտեմբերի 18-19-ը սոչաչվում է ամերիկյան մի բարձրաստիճան ոչատասխանյայի այցը Բաքու: Համաձայն նախնական տեղեկատվության, նա կարող է լինել ոչեսքարտուղար Ուորեն Քրիստոֆերը: Ամերիկյան ոչատասխանյայի այցելության ժամանակ, հավանաբար, վերջնականապես կլուծվի միջազգային նավթային ընկերությունների կոնսորցիումի եւ ադրբեջանական կառավարության միջեւ համաձայնագրի ստորագրման հարցը, որը վերաբերում է ադրբեջանական նավթահանքերի համատեղ մշակմանն ու շահագործմանը: ԼՏ

«Դոնի կազակները հայերի կողմից չեն կռվում»

Բաքվի ռադիոն դեկտեմբերի 7-ին հաղորդեց, «Դոնի կազակների ոչատասխանական դեկավարությունը եւ ժողովը հերքել են երկար ժամանակ մեզանում տարածված այն ոլնդումները, թե Դոնի եւ Հյուսիսային Կովկասի կազակները հայերի կողմից զանգվածաբար մասնակցում են Լեռնային Դարաբաղի հակամարտությանը: Դոնի կազակների ասամանքներից մեկի խոսքերով, որը չնշեց իր անունը, կազակների ներգրավման հաղորդականությունն ունի երկու նոչատակ: Առաջին, ոչատրվակ ունենալ խոսելու հակամարտության էթնիկական ու կրոնական բնույթի մասին: Երկրորդ, հայերն ամեն կերպ ջանում են Դոնի կազակներին ներկայացնել որպես խառնամբոխ, որն այրվում է որեւէ մեկի վրա կրակելու ցանկությունից, եւ միաժամանակ Ռոստովի հայ համայնքի օգնությամբ մարզի դեկավարության դժգոհությունը հարուցել կազակների գործողությունների առթիվ: Իսկ ինչ վերաբերում է ոչատերազմին հայերի կողմից կազակների մասնակցությանը, ոչ մի ժողով նրանց չի ուղարկել»:

Ադրբեջանը կդառնա կայունության երաշխավոր

Դեկտեմբերի 6-ին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հետ հանդիպման ժամանակ Իսրայելի խորհրդարանի ոչատգամավոր Էֆրային Սնեհը հայտարարեց, որ հզոր ու անկախ Ադրբեջանը կարող է դառնալ Անդրկովկասի կայունության երաշխավոր: Սնեհը նշեց, որ ոլեսության կազմավորման գործընթացներն Ադրբեջանում եւ Իսրայելում յափազանց նման են իրար: Նա ասեց, որ առաջադիմական բարեփոխումների ճանապարհին Իսրայելն «ունեցել է երկարատեւ ագրեսիայի ժամանակաշրջան»: Սնեհը հույս հայտնեց, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտությունը շուտով իր լուծումը կգտնի ճիշտ մերձավորարեւելյան կարգավորման ոլես: Իր հերթին, Ալիեւը տեղեկացրեց Սնեհին այն միջոցառումների մասին, որ ձեռնարկել է հանրապետության դեկավարությանը, եւ թե ինչպես արհամարհելով ՄԱԿ ԱԽ, ԵԱՀԽ որոշումները, հայկական կողմը շարունակում է ագրեսիան Ադրբեջանի նկատմամբ: Ըստ Ալիեւի, դա խորացնում է հանրապետությունում տիրող տնտեսական եւ սոցիալական ճգնաժամը, ինչը ոչատճառ է դառնում հաղորդացիների, այդ թվում նաեւ հրեաների, կենսամակարդակի անկմանը: Ալիեւը հայտարարեց, որ Ադրբեջանը կարիք ունի ոչ միայն ոչարզ օգնության, այլեւ հեղինակություն վայելող երկրների համատեղ ջանքերի «ավարտելու ոչատերազմը եւ հաստատելու իր տարածքային ամբողջականությունը»: ՏՍՍՍ

Ներկայացուցչության կարգավիճակը կփոխվի

Մոս ժամանակներս Մոսկվայում Ադրբեջանի լիազոր ներկայացուցչությունը կստանա Ռուսաստանում Ադրբեջանի դեսպանության կարգավիճակ: Դեսպանությունը կենթարկվի Ադրբեջանի արտգործնախարարությանը եւ կկարողանա փոփոխներ ունենալ միայն Ռուսաստանի գլխավոր արտաքին քաղաքական գերատեսչության հետ: Ներկայումս լիազոր ներկայացուցչությունը, լինելով հարեւան ոլետությունում նախագահի ներկայացուցչություն, կատեր ունի Ռուսաստանի իշխանության բոլոր մարմինների հետ: ԼՏ

digitised by A.R.A.R.@

Վերլուծություն

ԱՅՍՏԵՂ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ԿՅԱՆՔ ԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ

Մեկ օր վերականգնողական կենտրոնում

Ով հաճախ է երթևեկում Աշտարակի խճուղիով, անդայման նկատած կլինի ծերմակաքուր քառահարկ մի շենք՝ տարածված «Հայֆիլմ» կինոստուդիա չհասած տարածքում: Կարմիր խաչի հետվնասվածքային վերականգնողական կենտրոնն է դա, որը սկսել է գործել անցած տարվա հոկտեմբերից: Այստեղ էլ երկրաշարժի 5-րդ տարելիցի նախօրեին կազմակերպվեց մամուլի ասուլիս:



Ասուլիսի փակցված ցուցանակից դարզ է դառնում, որ բահագործումն ու գործարկումը հնարավոր է դարձել Կարմիր խաչի 26 ազգային ընկերությունների եւ վեց կառավարությունների աջակցության շնորհիվ: Հենց այդտեղ էլ մեզ դիմավորում եւ ողջունում է կենտրոնի գլխավոր տնօրեն Միհրան Նազարեթյանը: Նրանից ենք իմանում, որ այս շենքի կառուցման ընթացքում մոտ 3.5 տարի հիվանդների վերականգնումն ու տեղական անձնակազմի ուսուցումը ժամանակավորապես իրականացվել է Օրբելու փողոցում գտնվող ֆիզոթերապիայի ինստիտուտում: Այս գործում մեծ է արտասահմանցի բժիշկների, բուժքույրերի եւ ֆիզոթերապեւտների դերը: Նրանցից մեկն էլ՝ ֆրանսիացի Ֆրանսուա Քափուսը, այդ օրը դարձավ լրագրողների մեր խմբի «գիտը»:

Նրա ուղեկցությամբ եւ բացատրություններով շրջեցինք վերականգնողական կենտրոնի հիվանդասենյակներում ու բաժանմունքներում, եղանք ջրավազանում եւ մարզասրահում: Իդեալականին մոտ այս դեպքերում բուժվում են հիմնականում ողնաշարերի եւ ողնուղեղի վնասվածք ունեցող մարդիկ: Նրանց թիվն այսօր մեր հանրապետությունում անցնում է 500-ից: Մի մասը վիրավորվել է զորաբաղյան դաստերազմում, մյուսը՝ ենթարկվել ավտովթարի, երրորդ՝ դժբախտ դեպքերի զոհ է: Էլ չենք ասում երկրաշարժից տուժածների մասին, որոնցից մի քանիսը շարունակում են բուժվել այս հիվանդանոցում: Վերջինիս հնարավորություններն, իհարկե, սահմանափակ են՝ ընդամենը 110 մահճակալ, որոնցից ներկա դրությամբ զբաղված են 68-ը: Հիվանդները տարբեր տարիքի են. հանդիպեցինք, զրուցեցինք նրանց հետ: Սաթենիկ Սարգսյանն, օրինակ, ավտոբուսից ընկել է ուղիղ մեկ տարի առաջ, 1992 -ի դեկտեմբերի 10-ին եւ այդ ողջ ընթացքում զամված է մահճակալին: Համբերությունն ու տեխնիկան, իհարկե, հրաշքներ են գործում: «Երբ չհավատանք մեր գործի հաջողությանը, չենք աշխատի, դատմում է Ֆրանսուան, մենք ամեն ինչ անում ենք առավելագույնին հասնելու համար»:

Բուժման հաջորդ փուլում հիվանդն սկսում է օգտվել անվասայլակից: Ի դեպ, Ֆրանսուայի ասելով, նախատեսվում է շաս շուտով Հայաստանում սկսել նման սայլակների կամ, ինչպես բժիշկներն են ասում, անվաթոռների արտադրությունը, որը կթեթեւացնի նման հիվանդների հոգսը:

Բուժական այս կենտրոնն ունի բուժման իր փիլիսոփայությունը: Ինչպես այս մասին հայտնեց դրն. Նազարեթյանը դիտայցից հետո կազմակերպված մամուլի ասուլիսում. «Մեր նպատակը ոչ թե հիվանդին անկողնուց անվաթոռ տեղափոխելն է, այլ նրանց մեջ հաստատակություն վերադառնալու եւ կյանքում իր տեղը գտնելու կարողություն զարգացնելը: Հույժ կարեւոր այս նպատակն իրագործելուն են կոչված այն արհեստանոցները, որտեղ ողնաշարի վնասվածք ունեցող հիվանդներ մասնագիտություն կոչիկ կարել, գորգ ու գոբելեն գործել, ասեղնգործություն են սովորում, իրենց լիարժեք մարդ զգում: Իմաստավորվում է նրանց կյանքը, ավելին ազատվում են ավելորդության դաժան բարդույթից: Դիտում ես հաշմանդամ կանանց հյուսկեն գարդերն ու գործերը եւ հաղորդակցվում նրանց հոգու երազներին, կնոջ հարուստ ներաշխարհին: Այս իմաստով է գրաղեցված մահճակալներից 28-ը տված նախկին հիվանդներին, որոնց այժմ մասնագիտություն է ուսուցանվում:

Հիվանդների վերականգնմանը դրականորեն է ազդում նաեւ սոցտով ղարադելը: Մեր դնացած օրվա առավոտյան բուժական ողջ անձնակազմը եւ հիվանդները հանդիսավորապես Մոսկվա Լին ճանապարհել սայլակին գամված մեր բասկետբոլիստներին, իսկ ծանրամարտիկ Գագիկը Հայաստանը ներկայացնելու է Ատլանտայի օլիմպիական խաղերում:

Բուժական այս հիմնական տարբերությունը մյուսներից նաեւ այն է, որ հիվանդների խնամքը շարունակվում է նաեւ հիվանդանոցից դուրս գրվելուց հետո: Բժիշկներն այցելում են նրանց տները, ծանոթանում տնային դայմաններին, հնարավորության դեպքում նոդասում դրանց բարելավմանը:

Իմքնաստիղ այս հիվանդանոցն իր տեսակի մեջ հավասարը չունի մեր տարածաշրջանում. այստեղ ներկա դրությամբ մի քանի հիվանդներ են բուժվում Վրաստանից, իսկ հաջորդ տարի ՀՎՎԿ-ն հիվանդներ կընդունի նաեւ Ռուսաստանից եւ Ուկրաինայից: Կանխելով լրագրողներիս հաճոյախոսությունները իրենց մոտ ստեղծված դայմանների մասին, կենտրոնի տնօրենն ասաց. «Սա առանձնահատուկ հիվանդանոց չէ, այլ դատնական բուժական հաստատություն: Սա միակ բժշկական հաստատությունն է մեզանում, որ բազարձակապես անվճար է: Ամեն ինչ դլեի աննենք այն դատեղանելու համար»:

Պարզվում է, որ նման հիմնարկներն էլ խնդիրներ ունեն: Դրանց մասին խոսվեց մամուլի ասուլիսում: Միհրան Նազարեթյանն ողդակի ասաց. «Մենք սդասումներ ունենք Հայաստանի կառավարությունից: Վերջինիս կողմից դեռ վերջնական լուծում չի ստացել էներգիայի եւ դիզելային վառելանյութի անխափան մատակարարման հարցը»: Հայկական Կարմիր խաչի ընկերության նախագահ Ա. Շաս Սարգսյանն իր հերթին ավելացրեց. «Նման կենտրոն դահելն ազգային-դետական խնդիր է: Սա մեր հարստությունն է, որի համար կառավարությունը դեմ է հոգ տանի»: Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Հայաստանում գործող դատվիրակության ղեկավար Մայքլ Շուլցը, նկատելով, որ գնալով դակասելու է օգնությունը միջազգային խողովակով, խնդրեց, որ Հայաստանի կառավարությունը լուծի կենտրոնը էներգիայով սնուցելու հարցը:

ԼԵՎՈՆ ԼԱԾԻԿՅԱՆ

Դատաստան

Բարեգործությունը շրջափակման դեմ անզոր է

«Մենք ի վիճակի չենք Հայաստանին մարդասիրական օգնություն զույց տալ»: Այս խոսքերն ասել է Ավստրիայի «Կարիտաս» մարդասիրական կազմակերպության դատախանատու քարտուղար Կառլ Շինկեն: Այդ հայտարարությունն ենթատեքստի մասին դատմեց դեկտեմբերի 7-ին «Ազատություն» ռադիոկայանի բդրակից Ալեքսանդր Սոլոլովը:

Գրեթե հիմնահատակ ավերված Լենինականի կենտրոնում է գտնվում Ավստրիայի կառավարության եւ մարդասիրական կազմակերպությունների միջոցներով կառուցված մանկական կլինիկայի շենքը: Այն կահավորված է մանկաբուժական նորագույն տեխնիկայով, բայց որեւէ օգուտ չի տալիս: Ընդհակառակը, այստեղ մանկիկներն ողջ մնալու ավելի քիչ հնարավորություն ունեն, քան տանը: Հոկտեմբերի կեսերից այնտեղ սկսել են նորածիններ մահանալ: Վիրահատարաններում ահավոր ցուրտ է: Երեխաներին գրահատությունից փրկելու համար գիշերը նրանց մոտ են գալիս մայրերը, փաթաթում մուշտակների մեջ եւ դատկում, որդեգի մանկիկներին ջերմացնեն: Հիվանդասենյակների դատերը, լուսամուտները, դռները ծածկված են բորդոսով: Այս մոայ դատկերն է նկարագրել ավստրիացի լրագրող Բեռնարդ Ուդինգը Լենինականից ուղարկած հաղորդման մեջ:

Վառելիքի եւ էլեկտրաէներգիայի բացակայության դատճառով զերադիական արեւմտյան կլինիկան դարձել է միանգամայն ավելորդ: Ֆանկարժեք սարքերը շարից դուրս են եկել: Կլինիկան կառուցած ֆիրմայի ներկայացուցիչ Հանս Գելերը խոստովանում է, որ շինարարական կադալ կնքելով Հայաստանի կառավարության հետ, իրենք շաս բան հաշվի չեն առել. իրենք եկել են արեւմտյան չափանիշներից. նկատի չունենալով, որ երկրում միանգամայն բացակայում է ենթակառուցվածքը: Այն բանից հետո, երբ կլինիկայում սկսեցին երեխաներ մահանալ, կազմակերպությունը եւ որոշ այլ կազմակերպություններ կարողացան մոտ 70 հազար գերմանական մարկ հանգանակել վառելիք եւ այլ անհրաժեշտ նյութեր ձեռք բերելու համար: «Այս ձմռանը կլինիկան կարող է մի կերպ գոյատեւել, բայց դրանից հետո մենք անկարող ենք դահդանել այն», հայտարարեց ավստրիական մարդասիրական «Կարիտաս» կազմակերպության ներկայացուցիչ Կառլ Շինկեն:

1994 թ. փետրվարին օգնությունը վերջնականապես կդադարեցվի»:

ԵՏ

Դիտում

Բազմազավակների միությունը դեռեւս առանց տարածքի է

«Ազգ» արդեն անդրադարձել է Հայաստանի բազմազավակների «Շիրազ» բարեգործական միության տարածք չունենալու հարցին:

Միությունը, որ ստեղծվել է 1992 թ. նոյեմբերի 18-ին, նպատակ է դրել նպաստել ազգի գենոֆոնդի դահդանմանը, բազմազավակ ընտանիքների սոցիալական հարցերի լուծման օժանդակմանը եւ այլն: Իր գոյության օրվանից ցայսօր միությունը, սակայն, չի կարողանում լուծել տարածք ունենալու խնդիրը: Սկզբում համադատասխան այցելություններ դատասխանել էին, որ ազատ տարածք չկա, միառժամանակ անց թե «Դուք տարածք գտեք, մենք կտրամադրենք»: Սակայն տրամով էլ գործը չի վերջացել: «Շիրազ» բարեգործական միությունը գտել է այդդոլիսի տարածքներ եւ ներկայացրել: Թվում էր, թե հարցը կլուծվի: Եւ իրոք, գտնված տարածքները հատկացվել են... միայն թե ոչ «Շիրազ» միությանը, այլ ուրիշ կազմակերպությունների:

Չենք վարվում այդ հատկացումների նախապայմանները, որոնց արդյունքում «Շիրազ» բարեգործականի գտած տարածքների տեր է դարձել ոչ նա, չնայած ի վերուստ տրված խոստմանը: Փոխարենը ներկայացնում ենք Հայաստանի բազմազավակների «Շիրազ» բարեգործական միության նախագահ Վիգեն Ղազարյանի բաց նամակը Երեւանի խորհրդի գործկոմի նախագահ Վահագն Խաչատրյանին:

«... Դուք եւ ձեր աշխատակիցներն այդդես էլ «չհասկացաք» Հայաստանի բազմազավակների միության կարեւորությունը, դեռեւ ո՞ր նդատակներ: Միությունն անձամբ ձեզանից եւ ձեր աշխատակիցներից ոչինչ չի ուզել՝ խնդրելով լուծել միայն տարածքի հարցը:

Միության կողմից ... ված ազատ տարածքներ հատկացել եք այլ կազմակերպությունների»: «Ձեր իրավասության տակ գտնվող բնակվարչության ֆոնդը, որի դեկավարն է Սամվել Հակոբյանը, դատասխանական հարցում է խլել Շահումյանի գործկոմ տարածքի հարցով. Պատասխանական հարցումը, որը գրանցված է թե քաղաքային ԲՏԱԿ-ում, թե Շահումյանի գործկոմում, դատվեց եւ ադարկել նեսվեց անձամբ Շահումյանի գործկոմի քարտուղար Հ. Մարգարյանի ձեռքով»: Մեղադրականի նամակող այս տողերից հետո այնուհետեւ նայելով հույս է հայտնվում, որ «այս նամակից գուցե կանեք որոշակի եզրակացություն եւ կաշխատեք օգտակար լինել Հայաստանի բազմազավակներին ու նրանց միությանը»:

Բաց նամակի եզրափակիչ տողերը բերեմ որոշակի դատկերացում տալիս են բազմազավակների միության եւ քաղաքային իշխանությունների «տարածքային» խնդրի արության մասին. «հակառակ դեպքում, մենք մեր վրայից գցում ենք այն բոլոր նախաձեռնությունների դատասխանատվությունները, որ բույլ կտան կատարել Հայաստանի բազմազավակները»:

«Ազգ»

Դատաստան

Ժամկետանց դահածոները դրամի կայունացման միջո՞ց

Անցած օրերի ընթացքում հանրապետության դահածոյագուրկ հասարակությունը ցնծության մեջ էր: Խանութներում խոզի մսի դահածոներ էին հայտնվել, ընդ որում, այնքիսի գնով, որ կարող էր առաջացնել նույնիսկ «Русская Америка» ֆիրմայի հանրահայտ ներկայացուցչի հոմերական երդիքը: Մեկ տուփ դահածոն արժեր ընդամենը 12,5 դրամ: Անշուշտ, նման եզակի փաստը մեծ աշխուժություն էր առաջացրել հանրապետության դրամատիրական շրջանակներում, եւ խանութների առջեւ գոյացած հերթերն իրենց մարդաբաստությամբ կարող էին մրցել նույնիսկ 88-ի հանրահավաքների հետ: Փոխադարձության ներողամիտ հեգնական ժդիտների ներքո դահածոն գնած եւ հերթից ողջ դուրս գալուց դիտիվ քաղաքացիները երջանկությունից ցատկոտելով շտապում էին տուն՝ դարձենալու տնեցիների առաջ եւ անակնկալ ուրախությունը նրանց հայտնելու համար: Ավաղ...

Նալբանդյան փողոցում գտնվող մթերային խանութում նույնդես մսի դահածոներ կային, սակայն այդ բաժնում զարմանալիորեն ոչ մի գնորդ չկար: 25 դրամանոցը գրդանումս՝ հաճելի զարմանքով մոտեցա վաճառողուհուն եւ հարցրեցի, թե կարելի՞ է արդյոք գնել 2 դահածո: «Ոչ», կտրեց նա անդրհիմյան սառնությամբ եւ շտապեց վաճառասեղանի դահածոները լցնել արկղը: Հաջորդ երեք հարցերս մնացին անդատասխան, բայց արժանացան այնքիսի հայացքի, որը սուլգ կերդով վկայում էր, թե յորորդ հարցից հետո դահածոներից մեկը կարող է փոխել ուղղությունը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Այն է՝ դատրաստվում էի հասարակայնության ուշադրությունը հրավիրել այս աղաղակող անարդարության վրա, երբ մոտ ցավ մի բավական բարեկիրթ երիտասարդ (ըստ երեւույթին, խանութի աշխատակիցներից) եւ տեղեկացրեց, թե դահածոները ժամկետանց են: «Այսինքն, ուզում ե՞ս 2 հատ տամ, բայց չեմ կարա կյանդ երաշխավորեմ», ասաց նա եւ հայտարարեց, թե դահածոներն ուռած են եւ բացելիս զարհուրելի հոտություն են արձակում: Նման դայմաններում խոսակցությունը շարունակելն ավելորդ էր, մանավանդ որ երիտասարդը կարող էր իրականացնել սդառնալիքը եւ բացել դահածոներից մեկը, ինչը, հնարավոր է, կարող էր հաղարի այդ հատվածի համար էկոլոգիական աղետի վերածվել: Ամենահետաքրքիրն այն է, որ ընդամենը մեկ օր առաջ խմբագրության մի խումբ աշխատակիցներ արդեն իսկ կերել էին այդ նույն խանութից մեծ ցանների գնով ձեռք բերված մի դահածո, եւ սատանի ականջը խուլ, առայժմ ողջ-առողջ են: Ինչպե՞ս:

Ավելի ուշ տեղեկացանք, որ ժամկետանց դահածոներ են հայտնվել նաեւ քաղաքի այլ խանութներում, եւ միայն մի որոշ մասը վաճառելուց հետո է դարզվել, որ դրանք վաճառել չէր կարելի: Դեռ լավ է, որ խանութներում երկու դահածոյից ավելի չէին տալիս (երեւի մահացու դոզան դա էր, թե չէ երեւան քաղաքի բնակարանային խնդիրը կարող էր լուծվել շաս արագ եւ արդյունավետ, ինչը կգիներ դարենի եւ մթերումների նախարարության եւ քաղխորհրդի համագործակցության փայլուն օրինակ:

Մի խոսքով, [illegible] դեղին է, երբ կարելի է ասել, «երանի դրամով աղքատներին, գի նրանցն է կենդանի մնալու հույսը»:

ԱՐՄԵՆ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ կառավարությունը հեղուկ գազ չի ներմուծում

Նոյան տարան գործակալության բդրակցի այն հարցին, թե արդյոք փոդոցում բաղոնների վաճառվող հեղուկ գազը ՀՀ էներգետիկայի նախարարության հետ որեւէ կապ ունի՞, էներգետիկայի նախարարության լրատվական կենտրոնից դատասխանեցին, որ ոչ, նախարարության համակարգում հեղուկ գազ գոյություն չունի:

ԵՏ

digitised by A.R.A.R.@

Հանդիպում

ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՎՏԱՆԳ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

կամ դարձյալ պետության կարգավորիչ դերի մասին

Արժեզրկման հետեւանքներին հաջածանոր ենք առնե ոչ միայն գրքերից: Շատերն ուղղակի իրենց մաշկի վրա զգացին նրա ամբողջ ծանրությունը: Որ ոեսք է զարդել այն, ակնհայտ է եւ այլընտրանք չի հանդուրժում: Սակայն ի՞նչ գնով կարելի է անել դա: Տեսականորեն, ինչպես մատնանշում են փորձագետները, կարելի է հասնել դրան՝ գներն ազատականացնելով բարձրացնելով, իսկ դրամաշանդակությունը եւ դրամանիշերի բողարկումը՝ դադարեցնելով: Սակայն այս տարբերակը, ինչպես կարելի է հասկանալ նորանկախ ոչնտությունների փորձով, մեծ զոհողություններ պահանջելով կործանարար կարող է լինել բարեփոխումների կուրս վերցրած իշխանությունների համար: Իսկ այս դեպքում, անվստահությունը հաղթական ուժի նկատմամբ կարող է վերածել անվստահության միջոցառումների եւ նոյատակի հասնելու առհասարակ: Նման վերջաբանի կարելի է հասնել, եթե, օրինակ, դրամի կայունացումը դարձվի ինքնանպատակ, որը կարող է վտանգել ինչպես հասարակական եւ տնտեսական կյանքի բարեփոխումներն առհասարակ, այնպես էլ զանգվածների սոցիալական պաշտպանվածության մեխանիզմների արդյունավետությունը մասնավորապես:

Խոսում ենք արժույթի ամենակարեւոր հատկանիշներից մեկի կորակման գործառույթի մասին, որն էլ հենց նրա հանդեպ եղած վստահության չափանիշն է, մոռանալով մի փոքրիկ հանգամանք՝ բանի դեռ ոչնտությունն իրոք օրինակ չի ծառայել, գոյություն չի տվել իր վստահությունը: զանգվածներ չեն համոզվի, նրանք առաջվա պիսակիցը չեն: Ի՞նչ ասել է «ոչնտ կորակ» օրինակ: Փայլի կորակումը կարող է իրականացվել ինչպես մասնավոր կարգով («ներքնակների մեջ»), այնպես էլ ոչ ոչնտական (ոչ ոչնտական դրամատներում, ինվեստիցիոն բնկերություններում) եւ որքան էլ տարօրինակ թվա, ոչնտական կառույցներում: Պնդայքանկ, ավանդների միջոցով, ներքին շահող փոխառություն դարտասանների, ոչնտական այլ արժեթղթերով: Վերջին դեպքում արժույթը վերադառնալով ոչեվրոնակերի շրջադարձ: Նոյատեղ հանգամանք է դառնում դրամաշրջանառության կարգավորման համար:

Դրամի կորակման գործառույթը ոչնտությանը վստահելը մի քանի ճանապարհ ունի՝ ա) խնայդրամարկղի ավանդների շահաբաժիններ (տոկոսադրույքներ) բարձրացնելով, դրանց մասնակից դարձնելով վիճակախաղի, բ) ներքին շահող փոխառության տոմսեր ունեցողներին շահաբաժիններ վճարելով, գ) նկամտների վճարումներ հաղորդագրերին, բաց ցանկության, դրամատների միջոցով իրականացնելը: (հաղորդագրությունն անձնական հաշվի վրա կկատարվեն նրա բոլոր նկամտները, որոնք կձեւակերպվեն նաեւ թղթե ավանդներ, այսինքն՝ շահաբաժիններ կվճարվեն մնալով բանկում, իսկ թերագիր ծախսերի համար հաղորդագրի կենտրոնի այսման դրամ, որքան խնեն անհրաժեշտ է: Ի դեպ, այս դեպքում հնարավոր եւ նոյատակահարմար են դառնում նաեւ անկանխիկ գործառնությունները (առանձ or խառնարդից կտրելով հաց կամ այլ առյուծ գնելու դեպքում):

Ինարկե եւ շահող ավանդներ եւ խնայդրամարկղի գրքույկով աշխատավարձ ստանալը նորություն չպետք է դիտվի, դրանք արդեն եղել են մեզանում: Հարցն այն է, որ կանխիկ դրամի դպրոցի, դրամարժույթի գործառույթների բաղդ լինելու, դրամաշրջանառության կարգավորման անհրաժեշտության դայմանների դրանք ոչ միայն կարող են դրամի կայունացման դրական միտումներ առաջացնել, այլեւ ինչպես չափով սոցիալական դաշտպանության մեխանիզմների գործառույթ կատարել: Իսկ նման միջոցառումների իրականացման եւ արդյունավետության երաշխիքը հասակ ու անհասական աշխատող բանկային համակարգն է:

Անտարակույս դրամի կայունացման, արժեզրկման զսպման, գնաճի եւ բոլոր առումներով բնդունելի միջոց է ադրանքների (մեր դարաշրջանում առաջին անհրաժեշտության) շուկայի հագեցումը: Սակայն ինչպե՞ս: Այս «ինչպես»-ի դասախոսներից մեկը օրերս հրապարակվեց մամուլում ՀՀ կառավարության որոշման տեսով հանրապետության տարածքում բնակչությանն իրացվող կամ վաճառվող սենյակների առանձին տեսակներ եւ մանկական տեսակներ ադրանքներ ավելացված արժեքի հարկից ազատելու մասին (թիվ 590, 26.XI.93): Ըստ հիշատակված որոշման, ա.ա.հ-ից ազատվել են կենսակենցաղային ամենատեսակները եւ մեծ դահանջարկ վայելող մրերքները (կարագ, ձեթ, շաքար, շաքարավազ, մարգարին, ձավարեղեն, դանդաղ, կարի վրան) եւ մանկական հագուստեղենից որոշ տեսակներ (գոշիկ, տիկտաք, գուլդակիսազդոցա եւ այլն):

Թեպ խոսք, թերեւ առնչալիմանանեմ արդեն ոչ միայն կարող են դրամի կայունացման դրական միտումներ առաջանալ, այլեւ ինչպես չափով սոցիալական դաշտպանության մեխանիզմների գործառույթ կատարել: Իսկ նման միջոցառումների իրականացման եւ արդյունավետության երաշխիքը հասակ ու անհասական կազմակերպումներն, որոնք մասնավորապես եւ հարկային մշտական ճնշումներ գործադրել նման տակ սիրված են գործել զանց առնելով օրենքը (սիրված են, որովհետեւ հարկման նորությունների մասին տեղեկագրերի մեջ ինքը մասնագետն է մոլորվում, էլ որ մնաց առեւտրականը, իսկ հարկման մեխանիզմի, բնկուզ ժամանակավոր դադարեցման մասին առաջարկություններն առայժմ մնում են անարդյունք: Հակառակ դեպքում ոչ մի տրամաբանության չի ենթարկվում մեր փոքրոցների ու շուկայի մասնավոր առեւտուրը. ի՞նչ շահ կարող է ստացվել բարձր ինքնարժեքով ադրանքը Լեռան վաճառելուց եւ այս ֆոնի վրա ոչ թե ինքնադատություն, այլ իրեն խորհրդածելու նյութ նորատակահարմար չէ՞ արդյոք հանրադատության երդաններից մեկը (ասենք Մեղրին) ժամանակավորապես դարձնել մասնավոր ազատ գոտի, ասենք, կես տարի ժամկետով, կամ աշնան ձմռան ամիսներին: Չմոռանանք որ առեւտրի նման ազատականացումը կամ զոհերի դրակտիկան նոյատավոր է ոչ միայն ադրանքային շուկայի համալրման, այլեւ տնտեսության համար առհասարակ: Ի դեպ, ռուսական օրենսդրական դաշտի տարատեսակ դրսեւորման դեպքում ազատ գոտին կարող է մեծ զարգացման ունենալ ինվեստորների համար:

Քանիցս նշվում է, ինչպես ադրանքային, այնպես էլ տարադրամային դրամարների համալրման հարմար ադրանքների ու ծառայությունների արտահանման խրախնման կարեւորությունը: Սրա լծակներից մեկը մասային ազատակարգված բալանսակարգությունն է: Սակայն միայն կատարդը եւ դրատասխանատու չգտնող օրենքի կամ որոշման վրա հույս դնելը, այս կոնկրետ դեպքում, դժվար թե մոտեցնի ակնկալվող արդյունքին: Խնդրի լուծումը մեր դարաշրջանում հնարավոր է խստագույն հսկողության դեպքում: Երբ կենտրոնացված կերդով ադրանքների ոչ թե գնում, այլ դեպքության օժանդակությամբ ադրանքների (ծառայությունների) արտահանում կազմակերդվի, որի դեպքում կրացառվեն բոլոր հնարավոր ու անհնարին «ռոմանսները» դեպքական դաշտերների ու մասնավոր արտադրողների միջեւ: Ըստ էության, սա իր հիմքում դիտի ունենա միջդեպքական համաձայնագրեր (դայմանագրեր), որ դաշտերեր կառաջանվի արտադրողներին, հետո էլ հարկ, հետո էլ արտահանման հարեւանված հնարավորություն: Այդ ադրանքների արտահանումը խրախնվի (մեր դարաշրջանում) դիտի է նշանակի արտաքին տնտեսական գործունեության ազատականացում, որը նախատեսում է արտահանման քվոտաների եւ լիցենզիաների վերացում բաս ադրանքների համար, իսկ սա արդեն, անտարակույս, դիտի է որ խրախնի տարադրամի ներհոսքը:

Եւ երբ այս ամենն իրականանա առեւտրի դեպքական հասկանալի աշխուժացման դայմաններում, կարծում եմ, դրական արդյունքը երկար չի ուշանալու, նույնիսկ հաշվի առնելով այն, որ ադրանքների ներմուծումը նոր վիճառություններ կդահանջի (դիտենք այն իրեն վարձ ինչ-որ չափով սոցիալական դաշտպանվածության եւ կայունության համար):

Ազգային դրամի կայունացման հիմքում է, ինարկե, նաեւ տարադրամային նոյատակամդրված քաղաքականությունը: Սակայն այս մասին, ինչպես նաեւ այս առդարեգում մեր «նվաճումների» ու «բացդոմների մասին», հաջորդ անգամ:

ՄԱՐՍԵՍ ԲԵԿՅԱՆ
Մեկնաբան

Դրամաշրջանառություն

Արդյունավետության յուրահատուկ խթաններ

Ճաղոնական մենեջմենտի մասին առասդելներ են դատմում, այլադանության համար իմաստ ունի ավելացնել եւս երկու եղելություն:

Սառցին սյուժեն հերոսն է 60-ամյա Հիսնաարդիմ Կագիյաման Տոկիոյի «Ռոյալ» բնկերության նախագահը, որը ճաղոնական ավտոմոբիլային դարագաների սահմանում գրաղեցնում է երկրորդ տեղը: Բնկերությունում աշխատում են մոտ հազար մարդիկ, ամբողջ երկրում ծաղկում են 30 խանութներ: Կագիյամայի գնական եզակումը, որը նրան բերեց համաճաղոնական ճանաչում, դետք է փնտրել ոչ թե առեւտրական հաջողության հասնելու ուղղություններում, այլ նրա կոչվից հաստատուն դասիարակության հազվագյուտ միջոցի մեջ: Աշխատանքի արտադրողականության բարձրացման յուրատեսակ միջոցը նախագահը համարում է... հատարակական զուգարանների մաքրությունը: Այդ փայլուն գաղափարը Կագիյամայի մեջ ծնվել է դեռ շատ վաղուց, եւ սկզբում նա ոչ թե վարչական կարգով, այլ զուտ սեռական օրինակով դրան էր մղում իր ծառայողներին: Ծառայողներ գարմանալիորեն բնդառաջեցին գործարարոջ նախաձեռնությանը: առաջարեն բնդունեցին այդ գաղափարը եւ կարճ ժամկետում ձեռք բերեցին անհրաժեշտ ունակություններ. այժմ գլխավոր գրասենյակի 150 աշխատակիցներ ամեն առավոտյան խանձ նախագահի հետ միասին սինչեւ փայլելը մաքրում են զուգարանակոնները դրանով ձեռք բերելով հարմարային աշխատանքի նոր խթաններ: Կագիյաման իր նախաձեռնությունը հիմնավորում է վիկտորիանյան. այն բնկերությունը, որի հաջողությունները գրանցվում են գրանցվում ամենաբարձր մակարդակի վրա, ունի ամենամաքուր զուգարանները: Ինչպես ասվեց, գաղափարը ծնվեց դեռ 60-ական թվականներին, սակայն դրա գործնական իրականացումը հնարավոր դարձավ միայն 1980 թվականներին: Ներկայումս Կագիյամայի ընկերությունում գործում է մի ամբողջ ծառայություն, որի դեդքերն ունեն ինքնուրույն գրասենյակներ, հեռախոսներ, ֆաքսներ եւ համակարգչային ցանցեր: Ամեն դեդքում գործում է մի հանձնաժողով, որի դեդքերը ամեն ամիս հանդիսանում են ընդարձակ զեկուցագր

Դիտարկ

Անգլախությո՞ւն, թե փոխկախվածություն

Ուկրաինայի էներգետիկ համալիրն այսօր ցավոտ հարցերից մեկն է: Էներգամատակարարման բնագավառի մասնագետների գնահատականների համաձայն, Ուկրաինան սնվածքի բնագավառների հաշվին աղաղակում է էներգետիկ ռեսուրսների միայն մեկ երրորդը: Եվ սա այն դեպքում, երբ չփակվեն ատոմակայանները և չդադարի ածխի հանույթը (թեև հարկ է նշել, որ երկուսն էլ խիստ կասկածելի են): Նավթի խնդիրն էլ ավելի վատ է. ինքնաբավությունը չի գերազանցում 10 տոկոսից: Նախկին գործակցական կապերի խզումը ցավագնորեն խփում է ամբողջ արտադրությունների: Օրինակներ կարելի է բերել. Խարկովի «Մուրճ ու մանգաղ» գործարանը չի կարողանում ուռոֆիզային արտադրանք դիզելային շարժիչներ բաղարկել մեկ դեպքի դադարեցում, որն արտադրում է Ռուսաստանի համասեռ ձեռնարկությունը: Իսկ որոնս հետևանք, կանգ է առնում կոմբայնի հարահոսը Ռոստովի «Ռոստսելմաշում», քանի որ Խարկովից շարժիչներ չեն ստացվում:

Հաշվի առնելով տնտեսությունների փոխադարձ կախվածությունը, մնում կարող ենք ճգնաժամից դուրս գալ միայն համատեղ. այս հետևությունը հանգեցրին Ուկրաինայի խորհրդարանի դատգամավորները դեռ 1993 թվականի մարտին հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի քննարկումից հետո: Այն ժամանակ տնտեսավար դատգամավորները նախագահ Լեոնիդ Կրավչուկին մեղադրեցին Ռուսաստանից արհեստականորեն մեկուսանալու քաղաքականության մեջ, որն իր հերթին հանգեցնում է Ռուսաստանի կողմից Ուկրաինայի փլատակման երևույթը: Այդ մեղադրանքի համար հիմք ծառայեց երկու դեպքերի «զգայնի հակադարձումը: Իսկ դրանց գինը գերազանցեց բոլոր սպասելիքները:

«Գազային հակամարտության» հենց սկզբից թե Ռուսաստանը և թե Ուկրաինան հանդես էին գալիս ծայրահեղ դիրքերից: Այսպես, Ռուսաստանն առաջարկեց Ուկրաինային գազի մատակարարումները իրականացնել համաշխարհային գներով 1000 խմ դիմաց մոտ 45 հազար ռուբլի, մինչդեռ ռուբլու գոտու գործընկերներին (օրինակ, Բելառուսին) մատակարարում էր 15 հազարով, մոտ 5 հազար ռուբլի ներքին գներն դայմաններում: Բնականաբար, Ուկրաինան ուզում էր գազ ստանալ ավելի ցածր գներով: Այդ վիճակը կարգավորվեց: Ըստ համաձայնագրի, Ուկրաինան իրավունքներով Բելառուսին էր հավասարեցվում դեպի Եվրոպա ռուսական գազի տարանցման կողմերների իրականացման դիմաց 60 հազար խմ գազ 100 կմ փոխադրելիս 2.2 դոլարի դիմաց այն կկազմի 180 ռուբլի: Ահա ռուս-ուկրաինական հարաբերությունների այն սակավաթիվ օրինակներից մեկը, երբ փոխադարձ զիջումներ են արվել: Հիրավի, լավ է ուր, բան երբեմ: Բայց ինչու՞ էր դեմ խարխլել Ուկրաինայի տնտեսության հիմքերը և միայն դրանից հետո, ըստ էության, համաձայնության հասնել: Մինչև ե՞րբ բաղաքագետները դիտի չհաշվարկեն իրենց հայտարարությունների և արարքների գինը:

Իհարկե, ռուս-ուկրաինական հակասությունները չեն սահմանափակվում միայն տնտեսական դաշտով: Միասնական դեպքերը ԽՍՀՄ տրոհման բուն փաստը Ռուսաստանում և Ուկրաինայում տարբեր կերպ է գնահատվում. Եթե ռուսաստանցի բաղաքաբիվ բաղաքագետներ այն ընկալում են որոշ ափսոսանքով, սակայն Կիևում իշխող բաղաքական ուժերի տեսակետից դա անդայման դրական երևույթ է, քանի որ այն Ուկրաինային բոլոր տվեց դեհանգնության ստեղծել: Ըստ այդմ էլ ձեռնարկվում են մոտեցումներ բաղաքականության կոնկրետ հիմնահարցերի նկատմամբ, առանձին կարևորագույնը Ուկրաինայի միջուկազերծ կարգավիճակն է:

Ուկրաինան միջուկային դեպություն է

Հանրահայտ է, որ Ուկրաինայի ներկայիս ղեկավարությունը նախապես հայտարարել էր, թե Ուկրաինայի բաղաքականության սկզբունքային նպատակը չեզոք և միջուկազերծ դեպության կարգավիճակի վավերացումն է: Այսպիսի խրավիճակը միանգամայն այդ է: Սակայն START-I դայմանագրի և միջուկային զենքը չտարածելու դայմանագրին Ուկրաինային միանալու արձանագրության վավերացման հարցի առթիվ: Ըստ որում, բաղաքական խմբավորումներից ոչ մեկը այդ կարգի վճիռներին հավանություն չի տալիս: Ըստ բաղաքագետների կարծիքով, խոսք դեհ է լինի ոչ թե միջազգային համաձայնագրերին հարելու, այլ Ուկրաինայի միջուկային զինաթափման մասին աշխարհի մյուս դեհությունների զինաթափմանը զուգընթաց:

Այստեղ կարելի է խոսել նույնիսկ դեհության հանդուրժության կարևոր դրույթներից մեկի վերանայման մասին: Այս ամենն Ուկրաինայում ներքաղաքական ուժերի հիմնավոր վերախմբավորման հետևանքն էր միայն:

